

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2021 թ. սեպտեմբերի 6-ին կայացած թիվ 1 նիստի

Գիտական խորհրդի 40 անդամներից նիստին մասնակցել են 33-ը:

Օրակարգում՝

1. Կենսաբանության ֆակուլտետի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների ամփոփիչ և ընթացիկ հաշվետվությունների հարցը:
2. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի «Ընդհանուր և մոլեկուլային գենետիկա» մագիստրոսական ծրագրի փոփոխության հարցը:
3. Հեռակա ասպիրանտի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:
4. ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի և Գերմանիայի Դաշնային հանրապետության կրթության և հետազոտությունների նախարարության կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-գերմանական համատեղ թեմաների աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԳԿՀԴՆ – 2022» միջազգային մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած նախագծերի երաշխավորության հարցը:
5. Լևոն Օրբելու և Նորայր Միսակյանի անվանական կրթաթոշակների շնորհման հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների ամփոփիչ և ընթացիկ հաշվետվությունների հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Փոլադյանը: Թեմաների ղեկավարները ներկայացրեցին ամփոփիչ և ընթացիկ հաշվետվությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների օրացուցային պլանով նախատեսված աշխատանքները համարել ավարտված:

- Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր և «Կենսաբանության» ԳՀ ինստիտուտի գիտաշխատող, կ.գ.դ.

Կարեն Արմենի Թոշունյանի՝ ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ 19YR-1F013 ծածկագրով «Պրոտոնային ԱԵՖագի և մրջնաթթուջրածինլիազի ներթադանթային փոխազդեցության կարգավորման մեխանիզմները» թեման:

- Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ և «Կենսաբանության» ԳՀ ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, կ.գ.թ. Նիկոլայ Վլադիմիրի Ավթանդիլյանի ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ 19YR-1F042 ծածկագրով՝ «Հայկական դեղաբույսերի լուծամզվածքների հակաքաղցկեղային ներուժը և քիմիաթերապևտիկ դեղամիջոցների հետ սիներգիկ փոխազդեցությունների բացահայտումը՝ մարդու քաղցկեղային բջջային զծերում» թեման:
- Կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանության» ԳՀ ինստիտուտի գիտաշխատող, կ.գ.թ. Լիլիթ Յուրիկի Հակոբյանի՝ ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ 19YR-2I052 ծածկագրով՝ «Արդյունաբերական թափոնների օգտագործման հեռանկարները՝ մթնային և լուսային խմորում իրականացնող բակտերիաների խառը կուլտուրաների կիրառմամբ» թեման:
- Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ և «Կենսաբանության» ԳՀ ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, կ.գ.թ. Արմինե Արմենի Մարգարյանի՝ ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ 19YR-1F065 ծածկագրով՝ «Հայաստանի հանքապարներում մանրէային համակեցությունները՝ որպես կենսավերականգնման հեռանկարային միջոցներ» թեման:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել կենսաբանության ֆակուլտետի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմայի հետագա ֆինանսավորումը:

- Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Ռազմիկ Ռուբենի Մարգարյանի՝ ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ 20AA-1F018 ծածկագրով՝ «Հայաստանում տարածված էպիֆիտային և էպիլիտային քարաքոսերի կենսատեխնոլոգիական ներուժը» թեմա:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի «Ընդհանուր և մոլեկուլային գենետիկա» մագիստրոսական ծրագրի փոփոխության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ռ.Ս. Հարությունյանը: Նշվեց, որ անհրաժեշտություն է առաջացել «Ընդհանուր և մոլեկուլային գենետիկա» մագիստրոսական ծրագիրը փոխարինել «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական ծրագրով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել նոր մագիստրոսական ծրագրի հայտի մեկնարկը:

ԼՍԵՑԻՆ՝ Կենդանաբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Լևոն Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, կենդանաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս. Առաքելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել Լևոն Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման «Հայաստանի և հարակից տարածքների գորշ արջի (*Ursus arctos*) պոպուլյացիոն գենետիկայի և բաշխվածության ուսումնասիրությունները» Գ.00.08 «Կենդանաբանություն, մակարոծարանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ և գիտական ղեկավար հաստատել կենդանաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Աստղիկ Սամվելի Ղազարյանին:

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի և Գերմանիայի Դաշնային հանրապետության կրթության և հետազոտությունների նախարարության կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-գերմանական համատեղ թեմաների աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԳԿՀԴՆ - 2022» միջազգային մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած նախագծերի երաշխավորության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, գենետիկայի և բջջաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Տիգրան Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել գենետիկայի և բջջանաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Տիգրան Աշոտի Հարությունյանի «Ռադիոթերապիայում գերկարճ ազդակներով էլեկտրոնային փնջերի ճառագայթման կիրառման պոտենցիալի գնահատումը գենետիկական մարկերների կիրառմամբ» նախագիծը:

ԼՍԵՑԻՆ՝ Լևոն Օրբելու և Նորայր Միսակյանի անվան անվանական կրթաթոշակներիի շնորհման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին՝ Նորայր Միսակյանի անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել կենսաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի Սաթենիկ Մխիթարի Խալաթյանին, իսկ Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը

հատկացնել կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի չորրորդ կուրսի ուսանողուհի Լուսինե Միմոնի Դավթյանին:

4. Քննարկվեցին մի շարք ընթացիկ հարցեր նվիրված մանկավարժական և գիտական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.

Է.Ս. Գևորգյան



Գիտական խորհրդի քարտուղար՝
դոցենտ՝

Ի.Վ. Շահազիզյան